

մայարկս . այլ եւ են երկարակեացք եւ ա- 315
 ոողջք, փափուկք մարմինք եւ սրբապահք .
 եւ առաւել մրգօք եւ բանջարօք շատանան
 քան թէ մտով եւ այլ անհալ կերակրովք : Եւ
 պատմեաց մեզ այր մի ծեր Փռանկ, թէ ճի .
 տարու եմ, եւ նոր ատամունք բուսել էին 320
 նմա . եւ ասէր թէ ես իմ ժամանակս ոչ մահ
 եմ տեսել, ոչ սով, ոչ սուր . եւ այս ի՞նչ է,
 թէ ոչ արդարութեան եւ յիրաւանց, որպէս
 ասէ մարգարէն, թէ Մեղք նուազեցուցանեն
 զազգս եւ արդարութիւնն բազմացուցանէ 325
 որդոց որդիս . եւ թէ Սէրն ծածկէ զբազմու-
 թիւն մեղաց : Եւ այնպէս սէր եւ միաբան են,
 որ երբ տեսնան զմիմիանս՝ խոնարհութեամբ
 գրկախառն համբուրիւ ողջունեն սիրով զմի-
 միանս, որպէս թէ հեռու տեղաց են եկել . 330
 կամ թէ վաղուց չեն տեսել զիրար . եւ զայն
 առանց երկբայութեան եւ կեղծաւորութեան,
 զի սէրն է զլուխ օրինաց եւ պատվիրանաց .
 եւ հազար երանի ազգին որ սէր ունի :

Արդ ո՛րպէս գովեցից զազգն սուրբ եւ 335
 ընտիր, որ ի սկզբանէ մինչեւ ցայժմ կայ
 հաստատ թագաւորութիւն նոցա եւ հայրա-
 պետութիւն . զի զուտ եւ մաքուր են . եւ ոչ
 թէ առանց մեղաց են, քա՛ւ լիցի, զի Աս-
 տուած է միայն առանց մեղաց . իսկ մարդիկ 340
 մեղօք զառածեալ ըստ մարգարէին . Ով է
 մարդ որ կեցցէ եւ ոչ մեղիցէ . եւ Յոր ասէ,